Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-818$^{2}$-08.02.2010-ՏՀ-010/2

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Օ Ր Ե Ն Ք Ը

## <<ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (27 դեկտեմբերի 1997 թվականի, ՀՕ-186) 19-րդ հոդվածում 9.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<9.1. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌ

| | | |
|---|---|---|
| 9.1.1 | փոստային կապի գործունեության համար՝ տարեկան | բազային տուրքի 3000-ապատիկի չափով |

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ՀՀ կառավարություն

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, կատարված փոփոխությունների և լրացումների

<table>
<tr><th>h/h</th><th>Առաջարկության հեղինակը</th><th>Հոդվածը, կետը և ենթակետը</th><th>Առաջարկության բովանդակությունը (փոփոխությունը կամ լրացումը)</th><th>Եզրակացություն</th></tr>
<tr><td>1.</td><td>ՀՀ կառավարություն</td><td>Հոդված 1</td><td>1-ին հոդվածով նախատեսվող 19-րդ հոդվածի 9.1-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.<br><< 9.1. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌ<table><tr><td>9.1.1 փոստային կապի գործունեության համար՝ տարեկան</td><td>բազային տուրքի 3000-ապատիկի չափով>></td></tr></table>Միաժամանակ, 1-ին հոդվածով նախատեսվող 19-րդ հոդվածի 9.1-րդ կետի խմբագրությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, որի համաձայն իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին), մասնավորապես հիշյալ կետի խմբագրությունը չպետք է նախատեսվի աղյուսակի ձևով:</td><td>Կատարվել են համապատասխան փոփոխություններ:</td></tr>
</table>